

ներուն խնամքին ու օրինապահութեան ենթակայ են»⁴²) :

* * *

Ուղեգրութեան երկրորդ հատորին մէջ ալ կան վկայութիւններ, որոնք հաստատաւ կը բերեմ :

«Նոյեմբեր 26 (1711-ին) մենք առաւօտուն Պերեկոպէն Գուսլով մեկնեցանք, ուր հասանք 29-ին : Ասիկա բաւական ընդարձակ քաղաք մըն է, բազմաբնակիչ, ուր կան թուրքեր, թաթարներ, յոյներ, հայեր եւ հրեաներ... Յոյները եկեղեցի մը միայն ունին որ կը բաւէ իրենց պէտքերուն, նոյնպէս նաեւ հայերը»⁴³) :

Գեկտեմբերին ուղեգիրը կ'այցելէ Պախչէսէրայ (Ղրիմ) «բազմաբնակիչ է — թաթարներ, հայեր, յոյներ եւ հրեաներ, որոնցմէ վերջի երեքը թանին կը վճարեն գլխահարկ տարեկան մէկ եւ մէկ չորրորդ գրառն»⁴⁴) :

Հոս ան կը ծանօթանայ Յիսուսեան Հայր Տուպպանի հետ, որ «համաձայնած էր հայ քահանաներու հետ անոնց եկեղեցիներուն մէջ պատարագելու Լատին ծիսակատարութեամբ, անոնց (եկեղեցիներուն) ազատ միջոցին, նաեւ անոնց մէջ թուրքերէն քարոզելու (չոր ինք շատ լաւ գիտէր) հոռոմէադաւան կաթոլիկ գերիներու կամ հայ հաւատադարձներու, ինչպէս նաեւ անոնց խոստովանանքը իմանալու, հաղորդութիւն տալու եւ եկեղեցական ուրիշ արարողութիւններ կատարելու»⁴⁵) :

Ուղեգիրը կը վկայէ, որ միայն յոյն եւ ալ առաւել հայ վաճառականներու կը թոյլատրուէր թափանցել Ղրիմի թաթարներէն երկիրները, մինչեւ Չէրքեզիստան՝ հոն ձեռք բերելու համար երկրին արտադրած ապրանքները՝ մեղր, մորթ, մուշտակ, թուր, դաշոյն, եւն. :

Նոյն տարին ան կ'այցելէ Ղարաու-

պաղար : «Բնակիչները մեծ մասամբ յոյներ, հայեր եւ հրեաներ են : Առաջիները եկեղեցի մը ունին... հայերը ունին ընդարձակ եկեղեցի մը տասնեւմէկ քահանաներով»⁴⁶) :

Կաֆայի «եկեղեցկազոյն քրիստոնեայ եկեղեցիները մզկիթի վերածուած են, կամ քանդուած են՝ իրենց նիւթերով մզկիթ շինելու համար, իսկ մնացեալները թուրքերը վաճառած կամ տուած են յոյներու եւ հայերու : Յոյները ունին եօթը, իսկ հայերը քսան եկեղեցի, որոնցմէ հազիւ կէսը սրբազան պաշտամունքի համար կը գործածուի, ոմանք կ'աւերուին անպէտ կամ նորոգութեան կարօտ ըլլալուն համար : Ասոնց մեծ մասը ձենովացիք կառուցած են, եւ դեռ վեր վար կարելի է տեսնել անոնց զինանշաններն ու նկարները իրական եւ արական սուրբերու, որոնք դեռ կը պաշտուին վերջին ստացողներէն ալ. իսկ գալով արձաններուն եւ քանդակակերպերուն, ինչպէս նաեւ խորաններուն, որոնք յատուկ են հոռոմէական կաթոլիկ եկեղեցիներուն, չեն գործածուիր արեւելեան քրիստոնեայ եկեղեցւոյ ըմբռմամբ»⁴⁷) :

Ուղեգիրը, իբր փերեզակ, ծպտեալ կ'ուզէ Չէրքեզիստան մտնել, սակայն «15 անգամ Չէրքեզիստան դացած Կաֆայի հայու մը խրատին անսալով՝ կը նախընտրէ իբր բօժիչ երթալ : Իր ծպտումը կը յաջողի եւ այլ առթիւ ալ կը գործածէ : 48) :

Ուղեգիրը Ենի Գալընի մէջ հայ ոսկերիչէ մը արծաթ դրամ մը կը գնէ : 1712-ին կ'անցնի «Թաման, թէեւ փոքր, բայց բազմաբնակիչ քաղաք մը, ուր կային հայերու, վրացիներու, մինկերներու եւ չէրքէզներու գաղութներ»⁴⁹) :

Չկնկիթի առևտուրը (խաւիար) ԺՁ. դարուն արդէն հայերուն ձեռքն էր : Ու-

42) Անդ՝ էջ 422-424 :

43) Բ. հատոր, էջ 23 :

44) Անդ՝ էջ 23-24 :

45) Անդ՝ էջ 28 :

46) Անդ՝ էջ 31 :

47) Անդ՝ էջ 32 :

48) Անդ՝ էջ 33 :

49) Անդ՝ էջ 39 :